ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունիսի 2013 թվականի
թիվ 149 -Ա, քաղաք Երևան

«ԴՈՄԻՆՈ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի հունիսի 18-ի դռնբաց նիստում քննարկեց «Դոմինո Փրոդաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ հարցը:

Քննարկման ընթացքում Հանձնաժողովն ամրագրեց հետևյալը:

«Դոմինո Վիդեո Փրոդաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ընկերություն) նախկին համահիմնադիր Արամ Հարությունյանը 2013 թվականի մայիսի 13-ին Հանձնաժողով է ներկայացրել դիմում, հայտնելով, որ 2009 թվականի դեկտեմբերի 7-ին իր, Ֆրանսիայի քաղաքացի Սևակ Սերոբյանի և Աշոտ Առաքելյանի կողմից ստեղծվել է «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ընկերությունը՝ համապատասխանաբար 34, 33 և 33 տոկոս բաժնեմասերով: Գործունեության երկու տարիների ընթացքում «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ընկերությունը իրականացրել է մի շարք միջոցառումներ, որոնցից ամենանշանակալիցը Երևանի Ազատության հրապարակում «Գոհար» և «Հայաստանի աստղերը» համերգային ծրագրերի կազմակերպումն է, ինչպես նաև «Պապենական Կիլիկիա» երգի ձայնագրումն ու տեսահոլովակի նկարահանումը: Նշված աշխատանքներից բացի «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ընկերությունն իրականացրել է գովազդային որոշ արշավներ, տեսահոլովակների նկարահանումներ, փիար ակցիաներ: «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ընկերության հիմնադիրների՝ մասնավորապես Արամ Հարությունյանի և Աշոտ Առաքելյանի ծագած անհաշտության արդյունքում 2013 թվականի փետրվարի 22-ին որոշում կայացվեց լուծարելու «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ընկերությունը, և ստեղծվեց լուծարային հանձնաժողով, որը դեռ չի ավարտել կազմակերպության լուծարման աշխատանքները: Արամ Հարությունյանը հայտնել է, որ հիմնադիրների ժողովից մեկ ամիս էլ չանցած Աշոտ Առաքելյանը ստեղծում և գրանցում է «Դոմինո Փրոդաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ «Դոմինո Փրոդաքշն» ընկերություն) և այդ մասին ծանուցումներում նշում, որ այն հիմնադրվել է 2009 թվականին (այդ ժամանակ հիմնադրվել է «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ընկերությունը) և ռեբրենդինգի է ենթարկվել 2013 թվականին: Արամ Հարությունյանը հայտնել է, որ Աշոտ Առաքելյանը «Դոմինո Փրոդաքշն» ընկերությանն է վերագրում «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ընկերության կողմից երկու տարում կատարված բոլոր գործերը՝ ֆեյսբուքյան էջում տեղադրելով լուսանկարներ, տեսանյութեր, մրցանակներ, որոնք որևէ առնչություն չունեն նորաստեղծ «Դոմինո Փրոդաքշն» ընկերության հետ: Արամ Հարությունյանը հայտնել է, որ սուտ տեղեկատվության

միջոցով փորձ է արվում յուրացնել «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ընկերության բարի համբավը:

Հանձնաժողովը Արամ Հարությունյանի դիմումի հիման վրա հարուցել է վարչական վարույթ:

Արամ Հարությունյանը 2013 թվականի մայիսի 31-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն հայտնելով, որ «Դոմինո Փրոդաքշն» ընկերությունը օգտագործում է «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ընկերության կողմից շուրջ երկու տարի օգտագործվող ապրանքային նշանը: Ի ապացույց նշվածի Արամ Հարությունյանը ներկայացրել է մի քանի գովազդային նյութեր:

Հարուցված վարչական վարույթի շրջանակում «Դոմինո Փրոդաքշն» ընկերության ներկայացուցիչ Դավիթ Մանթաշյանը (այսուհետ՝ Դ. Մանթաշյան) 2013 թվականի հունիսի 1-ին Հանձնաժողով է ներկայացրել առարկություններ հայտնելով, որ «Դոմինո Փրոդաքշն» ապրանքային նշանը 2013 թվականի փետրվարի 7-ին գրանցվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությունում՝ «Դոմինո Փրոդաքշն» ընկերության անվամբ:

Դ. Մանթաշյանը հայտնել է նաև, որ «Դոմինո Փրոդաքշն» ապրանքային նշանը ստեղծվել է 2009 թվականին, հեղինակային իրավունքը պատկանում է Աշոտ Առաքելյանին. «Դոմինո Փրոդաքշն» ընկերության հիմնադրումը և համանուն նշանի գրանցումը ընկերությունը դիտարկում է որպես ռեբրենդինգ և խոսք չի գնում «Դոմինո Փրոդաքշն» ընկերության 2009 թվականին հիմնադրված լինելու մասին, այլ ապրանքային նշանի ստեղծման տարեթիվն է:

Դ. Մանթաշյանը հայտնել է նաև, որ «Գոհար» երաժշտախմբի և մրցանակաբաշխության ժամանակ մրցանակի են արժանացել Աշոտ Առաքելյան և Արամ Հարությունյան անձինք՝ որպես նախագծի հեղինակ և ղեկավար: Մրցանակները չեն տրվել «Դոմինո Փրոդաքշն» ընկերությանը: Նշվել է նաև, որ հանրահայտ փաստ է, որ բոլոր տեսագրությունների, հոլովակների, շարժանկարների հեղինակ և ռեժիսոր է հանդիսացել Աշոտ Առաքելյանը: Ըստ Դ. Մանթաշյանի, անձը մի դեպքում որպես ստեղծագործության հեղինակ և մյուս դեպքում որպես «Դոմինո Փրոդաքշն» ապրանքային նշանի հեղինակ, ուներ և ունի բարոյական և իրավական հիմքեր իր իսկ կողմից հեղինակած աշխատանքները ֆեյսբուքի իր էջում օգտագործելու՝ պահպանելով հեղինակի մասին նշումները: Իսկ թե ինչու և թե ինչ հիմքով է հեղինակը թույլատրել «Դոմինո Փրոդաքշն» ընկերությանը նշված նյութերն իր էջում օգտագործելու, Դ. Մանթաշյանը գտնում է, որ սույն հարցը դուրս է վարչական վարույթի շրջանակներից:

Ա. Հարությունյանը 2013 թվականի հունիսի 17-ին Հանձնաժողով է ներկայացրել դիրքորոշում «Դոմինո Փրոդաքշն» ընկերության ներկայացուցիչ Դ. Մանթաշյանի կողմից Հանձնաժողով ներկայացված առարկությունների վերաբերյալ, հայտնելով, որ ստացվում է մի իրավիճակ, երբ «Դոմինո Փրոդաքշն» ընկերությունն ընդունում է, որ իր կողմից օգտագործվում է ուրիշի հեղինակային իրավունքը և փորձում է արհեստականորեն նույնացնել «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ընկերության կողմից ստեղծված արժեքները և այն վերագրել Աշոտ Առաքելյանին: Ա. Հարությունյանը հայտնել է նաև, որ միանգամայն անընդունելի է «Դոմինո Փրոդաքշն» ընկերության այն դիրքորոշումը, որ «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ընկերության գործունեության ժամանակ ստեղծված վիճարկելի իրավունքները պատկանում են Աշոտ Առաքելյանին, առավել ևս, որ վարչական վարույթի ընթացքում նշվածի կապակցությամբ որևէ ապացույց չներկայացվեց:

Ա. Հարությունյանի կողմից ներկայացվել են նաև տեսանյութեր, որտեղ երևում է, որ մրցանակները հանձնվում են «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ընկերությանը, ոչ թե՝ անվանական: Ա. Հարությունյանի կողմից ներկայացվել են նաև «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ընկերության կողմից մի շարք աշխատանքների իրականացման, ծառայությունների մատուցման վերաբերյալ այլ տնտեսվարող սուբյեկտների հետ կնքված պայմանագրերի պատճեններ և այլ նյութեր:

Այսպիսով, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը:

Օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ Հասարակության մոլորեցում է համարվում օրենսդրությամբ նախատեսված տվյալների կամ պայմանների վերաբերյալ նշումների բացակայությունը կամ օրենքին հակասող նշումների առկայությունը կամ գովազդի մեջ (գովազդման ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը, որը սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմել գովազդվող ապրանքի վերաբերյալ կամ օրենքին հակասող գովազդը:

Փաստորեն, Ընկերության ինտերնետային կայքում և ֆեյսբուքյան էջում իր կողմից իր աշխատանքների արդյունք չհանդիսացող՝ համերգային ծրագրերը, տեսահոլովակները, լուսանկարները, գովազդային հոլովակները, իրեն չհանձնված մրցանակները և գործողությունները, որպես իրենը և որպես սեփական աշխատանքի արդյունք ներկայացնելը, ինչպես նաև «Դոմինո Փրոդաքշն» ընկերության ստեղծման վերաբերյալ կեղծ տեղեկություններ հրապարակելը, կարող է մոլորեցնել հասարակությանը:

Օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ Օրենքի խախտման դեպքում Հանձնաժողովն իրավասու է իր որոշմամբ տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տվյալ տնտեսվարող սուբյեկտի կողմից սույն օրենքի խախտումների կրկնակիությունը, տնտեսվարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսվարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսվարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսվարող սուբյեկտի գործունեության ոլորտը և (կամ) պատմությունը:

Հանձնաժողովն Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելիս հաշվի է առնում, որ նշած գործողությունների միջոցով Ընկերությունը փորձ է արել համապատասխան ոլորտում ստանալ մրցակցային առավելություններ իր մրցակիցների նկատմամբ, ինչն ուղեկցվել է սպառողների շահերի վնասմամբ: Բացի այդ Ընկերությունը վարչական վարույթի ընթացքում չի վերացրել խախտումները:

Ելնելով վերոնշյալից և հիմք ընդունելով Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 12-րդ հոդվածը, 14-րդ հոդվածը, 19-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «զ» և «թ» կետերը, 31-րդ հոդվածը, 34-րդ հոդվածը, 35-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է

1. «Դոմինո Փրոդաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից իր աշխատանքների արդյունք չհանդիսացող՝ համերգային ծրագրերը, տեսահոլովակները, լուսանկարները, գովազդային հոլովակները, իրեն չհանձնված մրցանակները որպես իրենը և որպես սեփական աշխատանքի արդյունք ներկայացնելը, ինչպես նաև «Դոմինո Փրոդաքշն» ընկերության ստեղծման վերաբերյալ կեղծ տեղեկություններ հրապարակելը, որակել որպես տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների վերաբերյալ հասարակության մոլորեցում՝ անբարեխիղճ մրցակցության գործողություն՝ Օրենքի խախտում:

2. Օրենքի խախտման համար «Դոմինո Փրոդաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել տուգանք իրավախախտմանը նախորդող ժամանակահատվածի (2013 թվականի փետրվարի 5-ից մինչև 2013 թվականի հունիսի 18) հասույթի մեկ տոկոսի չափով:

3. Հանձնարարել Ընկերությանը՝

1) 5-օրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել սույն որոշմամբ սահմանված տուգանքի վճարումը հավաստող տեղեկատվություն,

2) 5-օրյա ժամկետում դադարեցնել Օրենքի խախտումը և այդ ժամկետի ավարտից հետո 5-օրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն և անհրաժեշտ ապացույցներ սույն որոշման 2-րդ կետի կատարման վերաբերյալ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենն «Դոմինո Փրոդաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից 10-օրյա ժամկետում: Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ վարչական բողոքի քննարկման արդյունքներին համաձայն չլինելու դեպքում՝ բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում, իսկ վարչական բողոք չբերելու դեպքում՝ ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀ Ա.ՇԱԲՈՅԱՆ